ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «17» փետրվարի 2015 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 02-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների մրցույթում հաղթողներին հավելավճարի պայմանագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ Լ. Մարդոյանին:

Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի
2015 թ. փետրվարի 17-ի N 02-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան _____ 2015 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանի (այսուհետ՝ Հանձնարարող), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և_____-ը,
(կազմակերպության անվանումը)
(այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն/ռեկտոր_____-ի (այսուհետ՝ Հանձնակատար), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի փետրվարի 17-ի N 02-Ա/Ք հրամանը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Հանձնարարողը պարտավորվում է Հանձնակատարին տրամադրել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների մրցույթում հաղթողների համար տրվող հավելավճարները՝ հաղթողներին վճարելու նպատակով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի գինն է՝ (տրամադրվող դրամական միջոցների չափը)

--------- դրամ (_____)
(թվերով և բառերով)

ՀՀ դրամ՝ թվով ---------- հաղթողներին հավելավճար վճարելու նպատակով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Հանձնարարողը սույն պայմանագրի 2.1 ենթակետում նշված ֆինանսական միջոցները Հանձնակատարին է տրամադրում 2015 թվականի փետրվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 31-ը, ամսական կտրվածքով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Հանձնարարողն իրավունք ունի.
4.1.1. հավելավճար ստանալու ընթացքում հաղթողներին 6 ամսից ավել արտերկիր գործուղվելու դեպքում՝ ընդհատել ֆինանսավորումը.
4.1.2. ցանկացած ժամանակ ստուգել Հանձնակատարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների իրականացման ընթացքը:
4.2. Հանձնարարողը պարտավոր է.
4.2.1. սույն պայմանագրի 3.1 ենթակետով սահմանված ժամկետներում Հանձնակատարին տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:
4.3. Հանձնակատարը իրավունք ունի.
4.3.1. Հանձնարարողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
4.4. Հանձնակատարը պարտավոր է.
4.4.1. հավելավճար ստանալու ընթացքում հաղթողներին արտերկիր գործուղվելու դեպքում ներկայացնել տեղեկանք.
4.4.2. սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարել անձամբ և սահմանված ժամկետներում.
4.4.3. Հանձնարարողի պահանջով նրան տրամադրել սույն պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
6.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ	**ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ**
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե	
ք. Երևան, փ. Օրբելի 22	
1 ՏԳԲ 900011033033	
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ Լ. Մարդոյան	